ՍՐԲՈՑ ՀՐԵՇՏԱԿԱՊԵՏԱՑ ԵԿԵՂԵՑՈՒ
ՀԻՄՆՈՐՀՆԵՔԻ ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

ԵԿԵՂԵՑՈՒ ՀԻՄՔՈՒՄ ՋԵՏԵՂՎԵԼԻՔ ՔԱՐԵՐԻ
ՕԾՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՀԱՆԴԻՍԱՊԵՏՈՒԹՅԱՄԲ ԿԱՏԱՐՎԵՑ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՍՐԲՈՑ ՀՐԵՇՏԱԿԱՊԵՏԱՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԻՄՆԱՐԿԵՔԸ

Սեպտեմբերի 10-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ կատարվեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանի հարևանությամբ կառուցվող Սրբոց Հրեշտակապետաց եկեղեցու հիմնարկեքը: Ձեռամբ Նորին Սրբության և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի բարձրաստիճան հոգևորականների օծվեցին եկեղեցու 16 հիմնաքարերը, որոնք դրվեցին եկեղեցու հիմքերում:

Հիմքերի օրհնությունից հետո Վեհափառ Հայրապետն իր օրհնության խոսքն ուղղեց ներկաներին: «*...Աստվածահաճո և օրհնյալ այս ձեռնարկով հայրենի մեր հողի վրա մի նոր օրհնություն է երկնքից հեղվում, որ զորացնում է մեր հավատքը, պայծառացնում մեր ժողովրդի հոգևոր կյանքը: ... Եկեղեցին ծառայելու է մեր ժողովրդին, նրա Հոգևոր կարիքների սպասավորությանը: Եկեղեցում արարողություններ պիտի կատարեն Հոգևոր Ճեմարանի սաները, նրանց շուրթերով աղոթք, փառաբանություն պիտի երկինք վերառաքվի՝ մեր հայրենական կյանքի շենության, մեր Եկեղեցու զորության և պայծառացման համար: Եկեք, սիրելիներ, միաբան սրտով մեր աղոթքը երկինք բարձրացնենք, հայցենք, որ Աստված խաղաղ պահի Հայոց աշխարհն, անսասան և հաստատուն Հայաստանյայց Եկեղեցին՝ ժրաջան իր սպասավորներով, հաստատուն կրթական իր հաստատություններով և օրհնյալ այն բոլոր ձեռնարկներով, որ իրականացնում է Հայաստանյայց Եկեղեցին ի հոգևոր շինություն մեր ժողովրդի*»,- ասաց Վեհափառ Հայրապետը:

Աղոթատունը կառուցվում է վաստակաշատ ճարտարապետ պրն Ջիմ Թորոսյանի նախագծով: Ճարտարապետական հորինվածքից ելնելով՝ եկեղեցին կկրի Սրբոց Հրեշտակապետաց անունը, որի կառուցումը նախատեսվում է ավարտել 2009 թ. գարնանը:

Հիմնօրհնեքի արարողությանը ներկա էին Մայր Աթոռի միաբաններ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանի տեսչական կազմն ու ուսանողությունը, հյուրեր և հավատացյալներ:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ